ՊՍԱԿ-ների արդիականացված ենթակառուցվածքները և սահմանահատման նոր ընթացակարգերը պետք է համալրվեն ՀՀ սահմանի կառավարման ոլորտի մարմինների թափանցիկության, հաշվետվողականության և ազնվության նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանն ուղղված ջանքերով: Կոռուպցիան Հայաստանում, ինչպես և այդ երևույթի ընկալումը, շարունակում է վնասել երկրի միջազգային հեղինակությանը՝ խոչընդոտելով արտասահմանյան ներդրումների կատարմանն ու միջազգային առևտրում փոքր ու միջին բիզների ներգրավմանը: Միևնույն ժամանակ, եվրոպական մոտեցումների ներդնումը սահմանների կառավարման ոլորտում մշակութային վերափոխում է պահանջում համապատասխան պետական մարմիններից՝ քաղաքացիական ծառայության ոգու ընդունմամբ: Ծրագրի շրջանակներում նաև օժանդակություն կցուցաբերվի սահմանի կառավարման ոլորտի մարմիններին՝ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի կատարելագործման հարցում, ինչն ուղղված կլինի դրանց աշխատանքի հաշվետվողականության և թափանցիկության ապահովմանը:

## V. Հիմնավորումներ

Մոտ 10 տարի տևած բանակցությունների արդյունքում, 2011թվականի նոյեմբերի 29-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ և Վրաստանի ներքին գործերի նախարարության միջև ստորագրվեց սահմանային համագործակցության մասին համաձայնագիրը: Համաձայնագրով սահմանվեցին երկու երկրների միջև սահմանային անվտանգության ամրապնդման հարցում համալիր մոտեցման կիրառման համընդհանուր իրավական հիմքերը:

Այժմ այդ Համաձայնագիրը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է համապատասխան օժանդակություն: Անհրաժեշտ են լրացուցիչ երկկողմ համաձայնագրեր, մասնավորապես՝ տեղեկատվության փոխանակման, համատեղ գործողությունների, ՊՍԱԿ-ներում, այդ թվում՝ “Բագրատաշեն” և “Սադախլո” ՊՍԱԿ-ներում, սարքավորումների համատեղ օգտագործման ոլորտում, ինչպես նաև երկու երկրների կողմից համապատասխան օրենսդրական ակտերի, կանոնակարգերի և ստանդարտ գործառնական ընթացակարգերի (ՍԳԸ) մշակում և ընդունում: Անհրաժեշտ կլինի մշակել և կիրառության մեջ մտցնել սահմանային ներկայացուցիչների, ինչպես նաև երկկողմ կապի սպաների պաշտոնների անձնագրերի նախագծերը: ՀԿՍՀԿ ծրագրի կողմից բազմիցս հրավիրվել է ՀՀ պետական մարմինների ուշադրությունը սահմանապահ և մաքսային մարմինների միջև երկկողմ համագործակցության հնարավոր ձևաչափերի ուսումնասիրման հարցին: Այդ աշխատանքները ներկայայում տարվում են “ԲԲԳԱ” և “Վրաստանի և Հայաստանի Հանրապետության սահմանին գտնվող «Բավրա» և «Նինոծմինդա» պետական սահմանի անցման կետերի սահմանների կառավարման կարողությունների զարգացում” ծրագրերի շրջանակներում և կշարունակվեն սույն փաստաթղթում ներկայացվող ծրագրի շրջանակներում:

Երկու երկրների մաքսային մարմինները նաև քննարկում են ՊՍԱԿ-ների համատեղ օգտագործման հնարավորությունը, որի դեպքում կվերացվի արտահանվող ապրանքների նկատմամբ մաքսային հսկողությունը արտահանման երկրում և կսահմանվի սահմանով տեղափոխվող ապրանքների միասնական մաքսային հսկողություն: Ակնկալվում է, որ ընթացակարգերի նման պարզեցմամբ կշարունակվի մաքսային սահմանով ապրանքների և տարանցիկ ուղևորների անցման տևողության կրճատման գործընթացը (տես ստորև բերված աղյուսակը):

**Սահմանահատման ներկայիս և ակնկալվող սպասման ժամանակը**

| “Բագրատաշեն” ՊՍԱԿ | Ներկայիս սպասման ժամանակը | Ակնկալվող սպասման ժամանակը |
|---|---|---|
| - Հետիոտներ | Մինչև 15 րոպե | Մինչև 5 րոպե |
| - ավտոբուսի ուղևորներ (մինչև 30 հոգի) | Մինչև 45 րոպե | Մինչև 20 րոպե |
| - Ուղևորատար մեքենաներ | | |
| - Բեռնատարներ (դատարկ) | Մինչև 20 րոպե | Մինչև 10 րոպե |

| | | | |
|---|---|---|---|
| - | Բեռնատարներ (բեռնված) | Մինչև 20 րոպե<br>Մինչև 120 րոպե | Մինչև 10 րոպե<br>Մինչև 25 րոպե |

*ՀՀ պետական սահմանի “Բագրատաշեն” և “Սադախլո” անցման կետեր*

“Բագրատաշեն” (ՀՀ) և “Սադախլո” (Վրաստան) ՊՍԱԿ-ները գտնվում են Հայաստանը Վրաստանին կապող M-6 ավտոճանապարհի վրա՝ Դեբեդ (վրացերեն՝ Դեբեդա) գետի հատման կետում, որով անցնում է ՀՀ և Վրաստանի պետական սահմանը՝ ծովի մակերևույթից 453 մ բարձրության վրա: Սա գլխավոր տրանսպորտային միջանցքն է, որը Հայաստանը կապում է Վրաստանին և ապա՝ Թուրքիային և Ռուսաստանին: Այս ճանապարհային միջանցքը նաև Վրաստանի Փոթի նավահանգստից դեպի Հայաստան և հակառակ ուղղությամբ բեռների փոխադրման հիմնական ուղին է:

**Ուղևորների և տրանսպորտային հոսքերի աճի միտումները և կանխատեսումը (օրեկան միջինացված թվերը)**

| “Բագրատաշեն” և ”Սադախլո” ՊՍԱԿ-ներ | Տեսակ, միջինացված օրեկան շարժ | | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2015 (հեռ.) |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Անձինք | Վրաստանից՝ Հայաստան | 885 | 908 | 1303 | 1549 | 2000 |
| | | Հայաստանից՝ Վրաստան | 871 | 888 | 1305 | 1579 | 1800 |
| | Տրանսպորտային միջոցներ (բոլոր տեսակների) | Վրաստանից՝ Հայաստան | 265 | 227 | 427 | 509 | 600 |
| | | Հայաստանից՝ Վրաստան | 235 | 206 | 394 | 465 | 500 |

ՀՀ և Վրաստանի սահմանին գործող բոլոր երեք ՊՍԱԿ-ների արդիականացումն, անշուշտ, կհանգեցնի “Բավրա”-“Նինոծմինդա” և “Գոգավան-Գուգութի” ՊՍԱԿ-ներով տրանսպորտային հոսքերի աճին, սակայն, հաշվի առնելով “Բագրատաշեն” – “Սադախլո” ՊՍԱԿ-ների ներկայիս նշանակությունը, սահմանահատումների ծավալներն այնտեղ նույնպես համաչափորեն կաճեն:

## VI. Ծրագրի ընդհանուր և հատուկ նպատակները

**<u>Ծրագրի ընդհանուր նպատակը</u>** հայ-վրացական պետական սահմանի “Բագրատաշեն” և “Սադախլո” անցման կետերում սահմանների համալիր կառավարման եվրոպական չափանիշների ներդնումն է, ինչն ուղղված է միջազգային առևտրի և տարանցիկ փոխադրումների խթանմանը, ինչպես նաև մարդկանց միջսահմանային շարժի ակտիվացմանը:

**<u>Ծրագրի հատուկ նպատակներն են.</u>**

- ԵՄ չափանիշներին համապատասխանող ՍՀԿ համակարգի ներդնում «Բագրատաշեն» և «Սադախլո» ՊՍԱԿ-ներում;
- Միջգերատեսչական և միջսահմանային համագործակցության ամրապնդում;
- Պետական սահմանի կառավարման մարմինների գործունեության թափանցիկության առավել բարձր մակարդակի ապահովում:

Սահմանների համալիր կառավարման սկզբունքների կիրառումը կարող է հզոր խթան հանդիսանալ միջսահմանային առևտրի և տարանցիկ փոխադրումների համար՝ պետական սահմանին առևտրի խոչընդոտների կրճատման շնորհիվ: Այս խոչընդոտները սովորաբար հանդես են գալիս տարբեր շահառու խմբերի կողմից սահմանը հատելու համար ծախսվող ժամանակի, տարբեր, այդ թվում՝ ոչ պաշտոնական վճարների քանակի և չափի տեսքով: Սահմանահատման ժամանակի կրճատման համար անհրաժեշտ են համապատասխան արդի ենթակառուցվածքներ, սահմանահատման պարզեցված ընթացակարգերի կիրառում, ներգերատեսչական, միջգերատեսչական և միջազգային համագործակցության ծավալում պետական սահմանի կառավարման ոլորտի մարմինների միջև (ՍՀԿ համակարգի երեք հիմնասյուները), որոնք պետք է ապահովեն մարդկանց և ապրանքների սահուն անցումը պետական սահմանով: Բացի այդ, պետական սահմանի կառավարման ոլորտի մարմինների աշխատակիցները պետք է անցած լինեն համապատասխան մասնագիտական պատրաստություն և ապահովված լինեն ծառայողական պարտականությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:

Պետական սահմանին առկա կոռուպցիայի մակարդակի նվազեցման համար անհրաժեշտ է հասարակության լայն զանգվածների իրազեկվածությունը սահմանահատման ընթացակարգերի և դրանց հետ կապված վճարների վերաբերյալ, ինչպես նաև պետական սահմանի կառավարման ոլորտի մարմինների կողմից թափանցիկության և հաշվետվողականության բարձր չափանիշների պահպանումը: Նոր ընթացակարգերի ներդրման շնորհիվ կարող են վերացվել կոռումպացված պաշտոնյաների կողմից կաշառակերության հնարավորությունները, իսկ նորագույն տեխնոլոգիաների ներդնումը կարող է ընդհանրապես կանխել նման դեպքերը՝ գործընթացների ավտոմատացման և սահմանային մարմինների պաշտոնատար անձանց աշխատանքի խիստ վերահսկման միջոցով:

Պետական սահմանի անցման կետերում անվտանգության ամրապնդման համար պահանջվում է նաև առևտրի և տարանցիկ փոխադրումների խոչընդոտների վերացում, արդի ենթակառուցվածքի և տեխնիկական միջոցների տրամադրում, հստակ հիմքերի վրա դրված ներգերատեսչական, միջգերատեսչական և միջազգային համագործակցություն և տեղեկատվության

փոխանակում սահմանային գերատեսչությունների միջև, լուրջ մասնագիտական պատրաստվածություն և բացարձակ անհանդուրժողականություն կոռուպցիայի նկատմամբ:

Առաջարկվող ծրագիրը կհամապատասխանի վերը թվարկված բոլոր պահանջներին՝ նպատակ ունենալով ապահովել իր վերջնական նպատակը, որը կայանում է միջազգային առևտրի և տարանցիկ փոխադրումների խթանման և միաժամանակ՝ սահմանային անվտանգության ապահովման մեջ, ինչի շնորհիվ կապահովվի նաև «Բագրատաշեն» և «Սադախլո» ՊՍԱԿ-ներում սահմանների համալիր կառավարման եվրոպական չափանիշների ներդնումը:

Ծրագիրն իր այս նպատակներին կհասնի կիրառելով երկկողմ և ազգային մոտեցումներ: Երկկողմ բաղադրիչները կառնչվեն Հայաստան-Վրաստան համագործակցությանը: Հետևաբար, սահմանների կառավարման համար պատասխանատու համապատասխան գերատեսչություններին օժանդակություն կտրամադրվի Եվրոպայում և աշխարհում սահմանների կառավարման լավագույն փորձի վերաբերյալ դասընթացների և աշխատաժողովների միջոցով: ԵՄ անդամ երկրների և համապատասխան միջազգային գերատեսչությունների փորձի կիսումը առանցքային դերակատարություն կունենան այդ աշխատանքների արդյունավետությունն ապահովելու համար:

Ծրագրի միջոցառումները կիրականացվեն չորս մոդուլների միջոցով: Այդպիսի թեմատիկ մոտեցումը թույլ կտա Ծրագրի թիմին մատուցել իր փորձառությունը և գիտելիքը ներդաշնակ, աստիճանաբար և կապակցված եղանակով ու միաժամանակ օպտիմալ կերպով անդրադառնալով հարցերի այնպիսի շրջանակին, որոնք բացատրում են, թե ինչ է իրենից ներկայացնում սահմանների համալիր կառավարումը:

Ծրագիրը նախագծված է այնպես, որպեսզի ցանկացած տեսանկյունից դիտվող հարց ստանա իր սպառիչ լուծումը, այսինքն նաև հեռանկարում, քանի որ ծրագրի մոդուլները շաղկապված են:

Միջոցառումների իրականացման տեսանկյունից, հատուկ ուշադրություն պետք է դարձվի ինտերակտիվ մեթոդների և կոնկրետ գործնական արդյունքների նույնականացման վրա, որոնք հնարավորինս կիրառելի կլինեն առկա պայմաններում: Դա շահառուներին հնարավորություն կտա իրենց լավագույն կերպով կապակցելու ձեռքբերված արդյունքների հետ և իրենց զգալ որպես սահմանների համալիր կառավարման ընթացակարգերի սեփականատերեր, ինչը երաշխիք կհանդիսանա Ծրագրի գործած ազդեցության կայուն պահպանման համար:

Ծրագրի չորս մոդուլներն են՝

- **Մոդուլ 1: ՍՀԿ ռազմավարություն և աշխատակարգեր**
- **Մոդուլ 2: Օրենսդրական դաշտի մշակում և հանրության իրազեկում**
- **Մոդուլ 3: Կարողությունների զարգացում**
- **Մոդուլ 4: Ենթակառուցվածքների ստեղծում և սարքավորումների տրամադրում**

Ակնկալվում է, որ ծրագրի ավարտին ապահովված կլինեն հետևյալ արդյունքները.

- ՍՀԿ ռազմավարությունը և օրենսդրական դաշտը ՀՀ-ում և Վրաստանում կհամապատասխանեցվեն ԵՄ ՍՀԿ սկզբունքներին՝ այդ երկրների սահմանի կառավարման ոլորտի պետական մարմինների մասնակցությամբ: Պետական մարմինների և դոնոր կազմակերպությունների ջանքերով կմշակվեն և կյանքի կկոչվեն գործառնական մակարդակում միջսահմանային համագործակցությունը կարգավորող աշխատակարգեր:

- ՀՀ և Վրաստանի սահմանի կառավարման ոլորտի մարմինների կողմից «Բագրատաշեն» և «Սադախլո» ՊՍԱԿ-ների համար մշակված կլինեն ներգերատեսչական և միջգերատեսչական ստանդարտ գործառնական ընթացակարգեր (ՍԳԸ) և արտակարգ իրավիճակների ծրագրեր:

- «Բագրատաշեն» և «Սադախլո» ՊՍԱԿ-ներում ՀՀ և Վրաստանի սահմանի կառավարման ոլորտի մարմինների կարողությունները զարգացած կլինեն մի շարք ոլորտներում՝ ներառյալ փաստաթղթերի ստուգումը, ռիսկերի գնահատումը և պրոֆիլավորումը, զննման մեթոդները և այլն: Միջին օղակի ղեկավար անձնակազմը պատրաստություն կանցնի հերթափոխերի կազմակերպման, արտակարգ իրավիճակների կառավարման, ինչպես նաև մշակված ՍԳԸ-ների արդյունավետ կիրառման ոլորտներում: Կանցկացվեն նաև հրահանգիչների պատրաստման դասընթացներ մի շարք առարկաներով:

- «Բագրատաշեն» և «Սադախլո» ՊՍԱԿ-ների ենթակառուցվածքներն ու սարքավորումները կարդիականացվեն՝ ապահովելու համար սահմանի կառավարման ոլորտի մարմինների արդյունավետ աշխատանքը և սահմանահատման սահուն գործընթացը քաղաքացիների համար:

## VII. Ռազմավարությունը

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հավանության է արժանացել ՀՀ ազգային անվտանգության խորհրդի 2007թ. հունվարի 26-ի նիստում: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգ է: Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով:

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության 1-ին հոդվածի, Հայաստանի Հանրապետությունն ապահովում է իր տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը, բնակչության ֆիզիկական գոյությունը:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կողմից Եվրամիության չափանիշների ընդունման և լավագույն փորձի ներդրման հանձնառությունը ենթադրում է սահմանների համալիր կառավարման ժամանակակից համակարգերի ստեղծում, որոնք կնպաստեն ապահովելու Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգությունը, ինչպես նաև սահմաններով անցնող անձանց ու ապրանքների հեշտացված շարժին: Որպես իր հանձնառությունների երաշխիք, ՀՀ նախագահի 2010թ. նոյեմբերի 3-ի կարգադրությամբ հաստատվել է ՀՀ սահմանային անվտանգության ապահովման և պետական սահմանի համալիր

կառավարման ռազմավարությունը: Այդ կարգադրության համաձայն, 2010 թ. փետրվարի 12-ին ՀՀ ազգային անվտանգության խորհրդի (ՀՀ ԱԱԽ) քարտուղարի ղեկավարությամբ ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին պետական սահմանի կառավարման ոլորտի պետական բոլոր մարմինների՝ ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) սահմանապահ զորքերի, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության պետական ծառայության, ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության (ստեղծվել է ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային պետական տեսչության վերակազմավորման արդյունքում՝ ՀՀ կառավարության 2013թ. հուլիսի 25-ի թիվ 857-Ն որոշման համաձայն) բարձրաստիճան ներկայացուցիչները: ՀՀ ազգային անվտանգության խորհուրդն իր առանցքային դերն ունի սահմանների կառավարման ոլորտի բոլոր մարմինների աշխատանքների համակարգման և մոնիտորինգի հարցում:

Բացի այդ, "ԲԲԳԱ" ծրագրի շրջանակներում "Բագրատաշեն", "Բավրա" և "Գոգավան" ՊՍԱԿ-ների արդիականացումը կառաջացնի սահմանահատման ընթացակարգերի պարզեցման անհրաժեշտություն, որի ակնկալիքով և ՀՀ նախագահը 2013թ. հուլիսի 22-ին ստորագրեց ՀՀ պետական սահմանի անցման կետերում "Մեկ կանգառ, մեկ պատուհան" սկզբունքի ներդրման մասին կարգադրությունը:

**Ծրագրի հիմնական շահառու մարմինները և թիրախ խմբերը**

- **ՀՀ ազգային անվտանգության խորհուրդ (ՀՀ ԱԱԽ)**. պատասխանատու է ՍՀԿ ոլորտում ազգային ռազմավարությունների և հայեցակարգերի մշակման համար: Բոլոր ռազմավարություններն առաջին հերթին պետք է հավանության արժանանան ՀՀ ԱԱԽ-ի կողմից՝ ՀՀ նախագահի աշխատակազմի հետ համաձայնեցմամբ:
- **ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանապահ զորքերն** իրականացնում են ՀՀ պետական սահմանի պահպանություն, ապահովում են պետական սահմանում ՀՀ անվտանգությունն ու անկախությունը, իրականացնում են սահմանային վերահսկողություն, պետական սահմանի ռեժիմի, սահմանային ռեժիմի և պետական սահմանի այնցման կետերի ռեժիմի պահպանություն:
- **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն** պատասխանատու է մաքսային ձևակերպումների և մաքսանենգության դեմ պայքարի համար:
- **ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության պետական ծառայությունն** իրականացնում է ՀՀ պետական սահմանով տեղափոխվող կենդանի կենդանիների, սննդի և կենդանական ծագման արտադրանքի, կենդանական կերի, հավելումների, մանրէական կուլտուրաների, անասնաբուժական միջոցների, ինչպես նաև այնպիսի նյութերի և առարկաների նկատմամբ, որոնց միջոցով կարող են տեղափոխվել կենդանիների վարակների հարուցիչ մանրէներ:
- **ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունը** պատասխանատու է ՀՀ պետական սահմանում ՀՀ մուտքի վիզաների տրամադրման համար:
- **Առողջապահության նախարարությունը** ՊՍԱԿ-ներում ներկայացված է սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի միջոցով: Դրանք իրականացնում են սանիտարակարանտինային հսկողություն, որն իրենից ներկայացնում է հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության հատուկ եղանակ:
- **Պետական սահմանը հատողները.** բեռնափոխադրող կազմակերպություններ, տրանսպորտային առաքողներ, տուրիստական գործակալություններ, ավտոբուսային ուղևորություններ իրականացնող կազմակերպություններ և միջքազգային առևտրի ոլորտում գործող մասնագիտացված ընկերակցություններ:

## VIII. Կառավարումն ու կազմակերպական կառուցվածքը

ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակը հանդես կգա որպես ԵՄ հետ պայմանագիր ստորագրող կողմ: Այդ պայմանագրի 1-ին հավելվածը սույն Ծրագրի փաստաթուղթն է և ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակն էլ կստանձնի Ծրագրի որակի ապահովման և վարչարարության պատասխանատվությունը՝ ներառյալ ծրագրային և ֆինանսական հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը:

Կստեղծվեն ծրագրի իրականացման երկու թիմեր, մեկը Հայաստանում, մյուսը՝ Վրաստանում: Հայաստանում Ծրագրի կազմում ընդգրկված կլինեն Ծրագրի ազգային համակարգողը, մաքսային հարցերով փորձագետը, իրավական հարցերով փորձագետը, "Սահմանը հատողների ցանցի" հարցերով ազգային փորձագետը, SS հարցերով ազգային փորձագետը, կոմունիկացիոն ենթակառուցվածքների հարցերով փորձագետը, ֆինանսական/վարչական հարցերով օգնականը և վարորդ-գործավարը:

Թիմերը կղեկավարվեն Ծրագրի ազգային համակարգողների կողմից, որոնք ուղղակիորեն հաշվետու կլինեն իրենց երկրների ՄԱԶԾ գրասենյակների նշանակած համապատասխան անձանց:

Երկու թիմերին կօժանդակի կես դրույքով ներգրավված միջազգային խորհրդատուն, որը պետք է ունենա սահմանների համալիր կառավարման ոլորտում բազմաթիվ կառույցների մասնակցությամբ՝ միջսահմանային համագործակցության աշխատանքային փորձ: Խորհրդատուի ամենօրյա պարտականությունների շրջանակում է Ծրագրի գործընկեր կառույցների հետ հաղորդակցության ապահովումը՝ կապված ծրագրային գործողությունների իրականացման, ինչպես նաև ծրագրային համախմբված հաշվետվութունների կազմման և ներկայացման հետ:

Ծրագրի ղեկավարման հանձնաժողովը (ԾՂՀ) բաղկացած կլինի այն նույն պետական գերատեսչությունների ներկայացուցիչներից, որոնք հանդիսանում են "ԲԲԳԱ" և "ԲՆՍՀԿ" ծրագրերի ղեկավարման հանձնաժողովի անդամները, ՄԱԶԾ ու ՀՀ-ում Եվրոպական Միության պատվիրակության ներկայացուցիչներից և ԵՄ անդամ երկրների հրավիրված դիտորդներից: ԾՂՀ նիստերը կգումարվեն յուրաքանչյուր երկրում՝ տարին երկու անգամ:

## Ծրագրի կազմակերպական կառուցվածքը

**Ծրագրի ղեկավարման հանձնաժողով (ԾՂՀ)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ և ՄԱԶԾ ղեկավարության նախագահությամբ**

| Գլխավոր շահառու | Իրականացնող | Ավագ մատակարար |
|---|---|---|
| ՀՀ ԿԱ ՊԵԿ | ՄԱԶԾ | ԵՄ, ՄՔՄՄԿ, ԵՄ անդամ երկրներ (Լատվիա, Ֆրանսիա) |

### Ծրագրի իրականացման թիմը Հայաստանում

1. Ծրագրի ազգային համակարգող (կընդունվի մրցույթով)
2. Ֆինանսական/վարչական հարցերով օգնական (գործող պայմանագրի ժամկետը կերկարաձգվի)
3. Մաքսային հարցերով ազգային փորձագետ (գործող պայմանագրի ժամկետը կերկարաձգվի)
4. Իրավական հարցերով ազգային փորձագետ (կընդունվի մրցույթով)
5. Կոմունիկացիոն ենթակառուցվածքների հարցերով ազգային փորձագետ (գործող պայմանագրի ժամկետը կերկարաձգվի)
6. “Սահմանը հատողների ցանցի” հարցերով ազգային փորձագետ (գործող պայմանագրի ժամկետը կերկարաձգվի)
7. Տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերով փորձագետ (գործող պայմանագրի ժամկետը կերկարաձգվի)
8. Վարորդ-գործավար (գործող պայմանագրի ժամկետը կերկարաձգվի)

ՄՔՄՄԿ-ն հանդես կգա որպես Ծրագրի իրականացնող գործընկերը և պատասխանատվություն կկրի ելքային արդյունքների ապահովման և միջոցների օգտագործման համար: Բացի այդ, ԵՄ անդամ երկրները՝ Լատվիան և Ֆրանսիան ներգրավված կլինեն որոշակի միջոցառումների իրականացման մեջ՝ ապահովելով տեխնիկական փորձառության տրամադրումը:

## IX. Նախատեսվող գործակցություն

Ծրագիրն ամբողջությամբ կհամակարգվի ՄԱԶԾ կողմից իրականացվող “ԲԲԳԱ” և “ԲՆՍՀԿ” ծրագրերի աշխատանքների հետ: “ԲԲԳԱ” ծրագիրը ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված մի նախաձեռնություն է, որը մշակվել է ԵՄ ֆինանսավորմամբ իրականացված “ՀԿՍՀԿ” ծրագրի շրջանակներում կազմված սահմանի անցման կետերի տեխնոլոգիական սխեմաները նախագծելու արդյունքում: “ԲԲԳԱ” ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, ԵՄ հարևանության ներդրումային գործիք հիմնադրամի, Հայաստանի Հանրապետության կառավարության և ՄԱԶԾ կողմից: “ԲՆՍՀԿ” ծրագիրը կարողությունների զարգացմանն ու ինժեներական ցանցերի տեղադրմանն ուղղված ծրագիր է՝ կենտրոնացված “Բավրա” և “Նինոծմինդա” ՊՍԱԿ-ների շուրջ, որի առաջին բաղադրիչը համանման է սույն Փաստաթղթում նկարագրվող ծրագրին:

Արդիականացման ենթակա բոլոր երեք ՊՍԱԿ-ները, ներառյալ “Բագրատաշենը”, հանդիսանում են Եվրոպական Միության TRACECA-ի (Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցք) միջանցքում տեղակայված ՊՍԱԿ-ներ: Ծրագիրը կանոնավոր կապ կպահպանի և երկխոսություն կպահպանի Հայաստանի և Վրաստանի TRACECA-ի ազգային համակարգողների հետ և կերաշխավորի Բրյուսելում ԵՀ TRACECA-ի համակարգողի լիարժեք իրազեկվածությունը գործունեության և առաջընթացի մասին:

ՄԱԶԾ-ն կպահպանի նաև լիակատար համակարգում ՀՀ-ում ԵՄ խորհրդատվական խմբի (ԽԽ) աշխատանքների հետ: ԵՄ ԽԽ-ն ներգրավված է մի շարք համապատասխան և համալրող միջոցառումներում, որոնք սատարում են սույնով ներկայացված ծրագրի առանձնահատուկ և ընդհանուր նպատակները, ներառյալ՝ մաքսային բարեփոխումները և առևտրի խթանման աշխատանքները:

Երկրներից յուրաքանչյուրում ՄԱԿ-ի մշտական համակարգողի միջոցով կպահպանվի կանոնավոր հաղորդակցություն և համակարգում ՄԱԿ-ի այլ գործակալությունների, մասնավորապես՝ ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակի, ՄԱՓԳՀԳ-ի և ՄՄԿ-ի հետ, ինչպես նաև կանոնավոր կապ և համակարգում ԵՄ հետ՝ տվյալ երկրում գործող ԵՄ պատվիրակության միջոցով: Գործողություն 1.3-ով նախատեսված համակարգող ժողովների միջոցով կստեղծվեն բոլոր հնարավոր գործակցություններն այն աշխատանքների հետ, որոնք իրականացվում են այլ մասնակիցների, այդ թվում՝ FRONTEX-ի, Վրաստանում և ՀՀ-ում “Թվինինգ” ծրագրերում ներգրավված ԵՄ անդամ պետությունների և ԱՄՆ ֆինանսավորմամբ գործող համապատասխան աջակցության ծրագրերի հետ:

## X. Ծրագրի մոնիտորինգը և գնահատումը

Ծրագրի նկատմամբ մոնիտորինգի իրականացումը և գնահատումը ՄԱԶԾ և սույն Ծրագիրն իրականացնող թիմի պարտականությունն է: Համաձայն ՄԱԶԾ ծրագրային քաղաքականության և ուղեցույցների, ծրագրի մոնիտորինգն իրականացվում է հետևյալ կերպ.

- «Ատլաս» համակարգում գործողության մեջ է դրվում և Ծրագրի ազգային համակարգողի կողմից թարմացվում է խնդիրների/հարցերի գրանցամատյանը` հնարավոր խնդիրների ընթացքին հետևելուն և լուծմանը, ինչպես նաև փոփոխություն կատարելու հայտերի բավարարմանը նպաստելու համար:
- Ներկայացված ռիսկի նախնական վերլուծության հիման վրա, «Ատլաս» համակարգում գործողության մեջ է դրվում ռիսկի գրանցամատյանը, որը պետք է պարբերաբար թարմացվի ծրագրի իրականացման վրա հնարավոր ազդեցություն ունեցող արտաքին միջավայրի ուսումնասիրության միջոցով:
- Գործողության մեջ է դրվում և պարբերաբար թարմացվում է ծրագրի քաղված դասերի գրանցամատյանը` կազմակերպության ներսում շարունակական կրթությունը և հարմարեցումներն ապահովելու նպատակով, ինչպես նաև ծրագրի վերջում քաղված դասերի մասին հաշվետվության կազմմանը նպաստելու համար:
- Մոնիտորինգի և գնահատման աշխատանքների շրջանակը կնախագծվի ծրագրի մեկնարկին և հավանության կարժանանա Ծրագրի ղեկավարող հանձնաժողովի կողմից: Մոնիտորինգի և գնահատման շրջանակը իր մեջ կներառի մոնիտորինգի նպատակը, մոնիտորինգի ենթարկվելիք իրադարձությունները, մեթոդաբանությունը, պատասխանատու անձնաց, ռեսուրսների նկատմամբ եղած պահանջները և ռիսկերը: Մոնիտորինգի իրականացման ժամանակացույցը կմտցվի «Ատլաս» համակարգ և շարունակաբար կթարմացվի, որպեսզի հնարավոր լինի հետևել Ծրագրի կառավարման հետ կապված հիմնական միջոցառումներն ու իրադարձությունները:
- «Ատլաս» համակարգում գրանցված վերոնշյալ տեղեկությունների հիման վրա Ծրագրի ազգային համակարգողի կողմից Ծրագրի ապահովման (Project Assurance) միջոցով ծրագրի առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են Ծրագրի ղեկավարող հանձնաժողովին (ԾՂՀ)` օգտագործելով համառոտ գործնական բնութագրում (Executive Snapshot) առկա հաշվետվության օրինակելի ձևաչափը:
- Վերանայման տարեկան հաշվետվություն**:** Ծրագրի համակարգողը կազմում է Ծրագրի Վերանայման Տարեկան Հաշվետվություն և այն տրամադրում Ծրագրի Ղեկավարող Հանձնաժողովին, ինչպես նաև Ծրագրի Վերջնական Արդյունքների Հարցերով Խորհրդին: Որպես նվազագույն պահանջ` վերանայման տարեկան հաշվետվությունը պետք է բաղկացած լինի առաջընթացի վերաբերյալ եռամսյակային հաշվետվության (ԱԵՀ) համար «Ատլաս» համակարգի օրինակելի ձևաչափից, որն ընդգրկում է ամբողջ տարին` թարմացված տեղեկություններ ներկայացնելով ԱԵՀ-ի վերոնշյալ տարրերից յուրաքանչյուրի մասին, ինչպես նաև ստացված արդյունքների ամփոփումն` ըստ նախապես սահմանված տարեկան նպատակային ցուցանիշների:

**Ծրագրի արդյունքների որակի գնահատման աղյուսակ**

| | | |
|---|---|---|
| ԱՐԴՅՈՒՆՔ 1. Պետական մարմինների կարողություններն ուղղված սահմանների և միգրացիոն հոսքերի կառավարմանը, ինչպես նաև թրաֆիքինգի դեմ պայքարին, հզորացված կլինեն, և մարդկանց իրավունքներն առավել արդյունավետ պաշտպանված կլինեն | | |
| **Ծրագրային արդյունք 1** | Շահառու գերատեսչություններին՝ թե՛ Վրաստանում, թե՛ Հայաստանում, օժանդակություն է ցուցաբերվում վերանայելու/շարունակաբար զարգացնելու ՍՀԿ ռազմավարությունը և քաղաքականությունները ազգային (պետական) մակարդակով, համակարգելու պետության և դոնորների հանրույթի ջանքերը՝ հարկ եղած դեպքում վերանայելու և ներդնելու ՍՀԿ միջոցառումների ծրագրերը, ձեռք բերելու և հաստատելու պայմանավորվածություններ միջսահմանային համագործակցության ոլորտում՝ գործառնական մակարդակում | Մեկնարկ՝ 29.11.2013<br>Ավարտ՝ 31.05.2015 |
| **Նպատակ** | *Գործողություն 1.2* Աջակցության ցուցաբերում միջգերատեսչական աշխատանքային խմբերի աշխատանքներին<br>*Գործողություն 1.3* ՍՀԿ միջսահմանային համագործակցության համար հիմքի նախապատրաստում<br>*Գործողություն 1.4* Միջսահմանային համագործակցության ընթացակարգերին նվիրված երկկողմ աշխատաժողովներ<br>*Գործողություն 1.5.* Վերջնական գնահատում և ամփոփիչ համաժողով | |
| **Նկարագիր** | 1.1.1 Ծրագիրը կմեկնարկի մեկամսյա սկզբնական փուլով, որի ընթացքում կճնավորվի ծրագրի անձնակազմը, պլանավորման նպատակով կիրականացվեն մանրամասն ուսումնասիրություններ գործընկեր գերատեսչությունների հետ, կկատարվի համակարգում դոնորական այլ նախաձեռնությունների հետ: Կպատրաստվի սկզբնական հաշվետվություն և ծրագրի գործողությունների պլան (միջոցառումների ծրագիր)<br>1.1.2 Կանցկացվի ծրագրի բացման համաժողովը<br>1.2.1 Ծրագիրը համապատասխան հայցն ստանալու դեպքում կօժանդակի Միջգերատեսչական աշխատանքային խմբերի հանդիպումների ակզմակերպմանն ու անցկացմանը և կտրամադրի փորձագիտական խորհուրդներ աջակցության անհրաժեշտություն ծագելու դեպքում<br>1.3.1 Փորձագիտական օժանդակություն ՀՀ և Վրաստանի համապատասխան գերատեսչություններին՝ այնպիսի երկկողմ համաձայնագրերի, ենթաօրենսդրական ակտերի և կանոնակարգումների նախագծեր մշակելու հարցում, որոնք անհրաժեշտ են ՍՀԿ միջսահմանային համագործակցության ընտրված մեխանիզմները կենսագործելու համար<br>1.4.1 Կանցկացվի երկկողմ աշխատաժողով՝ ի մի բերելու ՊՍԱԿ-ի անձնակազմին և միջսահմանային համագործակցության մեջ ներառված սահմանային այլ գերատեսչությունների աշխատակիցներին՝ մշակելու հրահանգներ ՊՍԱԿ-ների մակարդակով Վրաստանի և ՀՀ սահմանների կառավարման ոլորտի գերատեսչությունների փոխգործակցության վերաբերյալ<br>1.5.1 ԵՄ անդամ-պետության փորձագետների կողմից կանցկացվի ծրագրի ամփոփիչ գնահատում<br>1.5.2 Կանցկացվի ծրագրի փակման համաժողովը | |
| **Գնահատման չափանիշ** | **Գնահատման մեթոդ** | **Գնահատման ամսաթիվ** |
| Ձևավորված է ծրագրի անձնակազմը, մշակված է ծրագրի աշխատանքային մանրամասն պլանը, պատրաստված է նախնական գնահատման հաշվետվությունը | Ծրագրի մանրամասն աշխատանքային պլան, նախնական գնահատման զեկույց, ծրագրի բացման համաժողովի փաստաթղթեր | 2014թ. 1-ին եռամսյակ |
| Կատարելագործվել են միջսահմանային համագործակցության մեխանիզմները | Ստորագրված երկկող համաձայնագրեր և արձանագրություններ տեղակատվության փոխանակման և միջսահմանային համագործակցության այլ մեխանիզմների վերաբերյալ | Մինչև 2014 վերջը<br><br>31.05.2015 |
| **Ծրագրային արդյունք 2** | Արդյունքը. ՀՀ և Վրաստանի՝ սահմանների կառավարման ոլորտի գերատեսչությունների կողմից | Մեկնարկ՝ 29.11.2013<br>Ավարտ՝ 31.05.2015 |

| | | |
|---|---|---|
| | մշակվել և ընդունվել են ներգերատեսչական և միջգերատեսչական ստանդարտ գործառնական ընթացակարգեր (ՍԳԸ-եր)՝ “Բագրատաշեն” և “Սադախլո” ՊՍԱԿ-ներում կիրառվելու նպատակով | |
| **Նպատակ** | *Գործողություն 2.1* Կանոնակարգող փաստաթղթերի մշակում՝ ներառելով «Մեկ պատուհան, մեկ կանգառ» հայեցակարգը, ՍԳԸ-եր/տեխնիկական առաջադրանքներ/փոխըմբռնման հուշագրեր (ՓԳ)՝ ուղղված ներգերատեսչական, միջգերատեսչական և միջսահմանային համագործակցության ամրապնդմանը<br>*Գործողություն 2.2* Հանրության իրազեկում<br>*Գործողություն 2.3* Ապահովել սահմանների կառավարման գերատեսչությունների գործունեության թափանցիկությունը և պետական ծառայության ոգին | |
| **Նկարագիր** | 2.1.1 Կմշակվեն ստանդարտ գործառնական ընթացակարգեր, ինչպես նաև սահմանի կառավարման ոլորտի մարմինների միջև տեղեկատվության փոխանակման մեխանիզմների կատարելագործմանն ուղղված միջգերատեսչական ՓԳ-ներ<br>2.1.2 Կմշակվի սահմանային ներկայացուցիչների պաշտոնի նկարագիրը<br>2.1.3 Կմշակվի “Մեկ կանգառ, մեկ պատուհակ” սկզբունքի ներդրման մանրամասն միջոցառումների ծրագիր<br>2.2.1 Կմշակվեն և կպատրաստվեն տեղեկատվական բրոշյուրներ սահմանը հատող հետիոտների, մարդատար և բեռնատար ավտոմեքենաների վարորդների համար վրացերեն, հայերեն և անգլերեն լեզուներով<br>2.2.2 Պետական սահմանի հետ կապված նորմատիվ իրավական ակտերի փաթեթի առկայության ապահովում վրացերեն, հայերեն և անգլերեն լեզուներով՝ զետեղված էլեկտրոնային գրքի ֆորմատով<br>2.3.1 Սահմանների կառավարման ոլորտի գերատեսչություններին օժանդակություն կցուցաբերվի գերատեսչական ինտերնետային կայքերը, բողոքարկման ընթացակարգերը և քաղաքացիների հետ շփման այլ գործիքները կատարելագործելու և թարմացնելու հարցում՝ ապահովելու աշխատանքի թափանցիկության ամենաբարձր մակարդակը | |
| **Գնահատման չափանիշ** | **Գնահատման մեթոդ** | **Գնահատման ամսաթիվ** |
| “Բագրատաշեն” ՊՍԱԿ-ում էապես աճել է միջգերատեսչական համագործակցության մակարդակը և օպտիմալացվել են սահմանահատման ընթացակարգերը | Պաշտոնապես ընդունված ստանդարտ գործառնական ընթացակարգեր “Բագրատաշեն” ՊՍԱԿ-ի համար: “Մեկ կանգառ, մեկ պատուհակ” սկզբունքի ներդրման մանրամասն միջոցառումների պաշտոնապես հաստատված ծրագիր | Մինչև 2014 վերջը<br>31.05.2015 |
| Էապես աճել է սահմանահատման ընթացակարգերի և սահմանային գերատեսչությունների գործառույթների վերաբերյալ հանրության իրազեկվածության, ինչպես նաև գերտեսչությունների գործունեության թափանցիկության մակարդակը | Տպագրված եռալեզու բրոշյուրներ: Վրացերեն, հայերեն և անգլերեն լեզուներով համապատասխան իրավական փաստաթղթերը զետեղված են էլեկտրոնային գրքի ֆորմատով: Գերատեսչական ինտերնետային կայքերը կատարելագործված են և թարմացված | Մինչև 2014 վերջը<br>31.05.2015 |
| **Ծրագրային արդյունք 3** | Բագրատաշեն” և “Սադախլո” ՊՍԱԿ-ների՝ Վրաստանի և ՀՀ սահմանների կառավարման ոլորտի գերատեսչությունների համապատասխան անձնակազմին մասնագիտորեն ուսուցանվել են մի շարք առարկաներ, այդ թվում՝ «Փաստաթղթերի անվտանգություն», «Ռիսկերի գնահատում և պրոֆիլավորում», «Զննման մեթոդներ», “Մեկ պատուհանի” էլեկտրոնային մոդել | Մեկնարկ՝ 29.11.2013<br>Ավարտ՝ 31.05.2015 |

<table>
<tr><td>Նպատակ</td><td colspan="3">Գործողություն 3.1 Վրաստանի և ՀՀ սահմանների կառավարման ոլորտի գերատեսչությունների աշխատակիցները կմասնակցեն ուսուցողական այցերին դեպի ԵՄ գործընկեր անդամ-պետությունների սահմանային անցակետերը և համապատասխան ուսումնական հաստատությունները:<br><br>Գործողություն 3.2 Հրահանգիչների պատրաստում (ՀՊ)<br>Գործողություն 3.3 Երկկողմ դասընթացներ<br>Գործողություն 3.4 Ազգային աշխատաժողովներ<br>Գործողություն 3.5 Ազգային աշխատաժողովներ հաշվետվողականության, թափանցիկության և ազնվության վերաբերյալ</td></tr>
<tr><td>Նկարագիր</td><td colspan="3">3.1.1 Վրաստանի և ՀՀ սահմանների կառավարման ոլորտի գերատեսչությունների աշխատակիցները կմասնակցեն ուսուցողական այցերին դեպի ԵՄ գործընկեր անդամ-պետությունների սահմանային անցակետերը և համապատասխան ուսումնական հաստատությունները<br>3.2.1 ՀՀ և Վրաստանի սահմանների կառավարման համապատասխան գերատեսչություններում որպես հրահանգիչներ/դասախոսներ գործող աշխատակիցներին կուսուցանվեն տարբեր առարկաներ, ինչպիսիք են՝ «Արտակարգ իրավիճակների կառավարում», «Ռիսկերի վերլուծություն», «Սահմանների կառավարման վերաբերյալ միջազգային օրենսդրությունը և վերջինիս միտումները» և այլն<br>3.3.1 Յուրաքանչյուր երկրում կանցկացվի մեկական երկկողմ աշխատաժողով, որի ընթացքում “Բագրատաշեն” և “Սադախլո” ՊՍԱԿ-ների և սահմանային գերատեսչությունների ղեկավար մակարդակի պաշտոնատար անձինք կանցնեն վերապատրաստում ներ- և միջգերատեսչական ու միջազգային համագործակցության, ինչպես նաև անդրսահմանային հանցավորության դեմ պայքարի հարցերով համագործակցության վերաբերյալ.<br>3.4.1 Յուրաքանչյուր երկրում կանցկացվեն մի շարք ազգային աշխատաժողովներ ուղղված “Բագրատաշեն” և “Սադախլո” ՊՍԱԿ-ների աշխատակազմի և սահմանների կառավարման ոլորտի գերատեսչությունների այլ աշխատակիցների համար՝ ռիսկերի պրոֆիլավորման և վերլուծության մեթոդաբանությունների, փաստաթղթերի անվտանգության, ՏՏ համակարգերը «Մեկ պատուհան» սկզբունքի ներդրման նպատակով օգտագործելու, անձանց և տրանսպորտային միջոցների զննման եղանակների, միջազգային հեղինակային իրավունքների և կեղծված ապրանքների, փախստականներին առնչվող օրենսդրության և ապաստանի իրավունքների, անդրսահմանային հանցագործությունների հայտնաբերման և քննության, սահմանների հետ կապված այլ հանցագործությունների հայտնաբերման և քննության հարցերով, ինչպիսիք են՝ ապրանքների և թմրամիջոցների մաքսանենգություն, սանիտարական, անասնաբուժական և բուսասանիտարական նորմերի խախտումներ:<br>3.5.1 Ազգային աշխատաժողով մարդկային ռեսուրսների կառավարման թեմայով<br>3.5.2 Ազգային աշխատաժողով էթիկայի/վարքագծի կանոնների և հաշվետվողականությանն ու թափանցիկությանն առնչվող թեմաներով</td></tr>
<tr><td colspan="2">Գնահատման չափանիշ</td><td>Գնահատման մեթոդ</td><td>Գնահատման ամսաթիվ</td></tr>
<tr><td colspan="2">“Բագրատաշեն” ՊՍԱԿ-ում գործող սահմանային գերատեսչոյունների անձնակազմի մասնագիտական կարողություններն էապես բարելավված են համապատասխան բոլոր որոլտներում, այդ թվում՝ մարդկային ռեսուրսների կառավարման և հաշվետվողականության ու թափանցիկության ապահովման առումով</td><td>Ուսուցողական այցերի/գործուղումների հաշվետվություններ, աշխատաժողովների հետ կապված փաստաթղթեր և մասնակիցների կողմից լրացված գնահատման թերթիկներ</td><td>Մինչև 2014 վերջը<br><br>31.05.2015</td></tr>
<tr><td>Ծրագրային արդյունք 4</td><td colspan="2">“Բագրատաշեն” և “Սադախլո” ՊՍԱԿ-ներում սարքավորումները և ենթակառուցվածքներն արդիականացվել են՝ հեշտացնելու սահմանների կառավարման ոլորտի գերատեսչությունների առավելագույնս արդյունավետ գործունեությունը և սահմանի սահուն հատումը հանրության համար:</td><td>Մեկնարկ՝ 29.11.2013<br>Ավարտ՝ 31.05.2015</td></tr>
<tr><td>Նպատակ</td><td colspan="3">Գործողություն 4.1 Ինժեներական ցանցերի տեղակայում (գազամատակարարում, էլեկտրամատակարարում, օպտիկամանրաթելային մալուխներ “Բագրատաշեն” ՊՍԱԿ-ի համար)<br>“Բագրատաշեն” և “Սադախլո” ՊՍԱԿ-ների համար սարքավորումների ձեռքբերում, այդ թվում, անհրաժեշտության դեպքում, դասընթացների անցկացում սարքավորումների օգտագործման վերաբերյալ<br>Գործողություն 4.2 ՏՏ համակարգերի և ենթակառուցվածքների արդիականացում</td></tr>
</table>

| | |
|---|---|
| **Նկարագիր** | 4.1.1 Ինժեներական ցանցերի տեղակայում (գազամատակարարում, էլեկտրամատակարարում, օպտիկամանրաթելային մալուխներ “Բագրատաշեն” ՊՍԱԿ-ի համար)<br><br>4.1.2 “Բագրատաշեն” և “Սադախլո” ՊՍԱԿ-ների համար սարքավորումների ձեռքբերում, այդ թվում, անհրաժեշտության դեպքում, դասընթացների անցկացում սարքավորումների օգտագործման վերաբերյալ<br>4.2.1 SS համակարգերի և ենթակառուցվածքների լիովին արդիականացում “Բագրատաշեն” ՊՍԱԿ-ում, այդ թվում՝ «Մեկ պատուհան, մեկ կանգառ» մոդուլի ներդնում, կոմունալ ցանցերի և օպտիկամանրաթելային ցանցի ապահովում |

| **Գնահատման չափանիշ** | **Գնահատման մեթոդ** | **Գնահատման ամսաթիվ** |
|---|---|---|
| “Բագրատաշեն” ՊՍԱԿ-ը ապահոված է ինժեներական ցանցերով և սարքավորումներով: Արդիականացվել է ՊՍԱԿ-ի SS համակարգը, գործարկվել է “Մեկ կանգառ, մեկ պատուհան” մոդուլը | Աշխատանքների և սարքավորումների ընդունման ակտեր | 31.05.2015 |

## XI. Իրավական նշանակություն ունեցող հարցերը

Սույն փաստաթուղթը, ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից ստորագրված համագործակցության ծրագրի գործողությունների պլանի (ՀԾԳՊ) հետ միասին կազմում են Ծրագրի փաստաթուղթը, ինչպես այն հիշատակված է 1995 թվականի մարտի 8-ի Օժանդակության հիմնական ստանդարտ համաձայնագրում (ՕՀՍՀ), իսկ ՀԾԳՊ բոլոր դրույթները տարածվում են այս փաստաթղթի վրա:

Հավելված 1: ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ: Ռիսկերի գրանցամատյան

| # | Նկարագրություն | Դասը | Ազդեցությունն ու հավանականությունը | Հակաքայլերը և կառավարման պատասխանը | Պատասխանատուն | Հեղինակը | Պարզման օրը | Վերջին տեղեկանքը | Ներկա Վիճակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | **Արտաքին ռիսկեր** | Քաղաքական | Հարավային Կովկասում հակասությունների պոտենցիալ աճը` մի կողմից Վրաստան-Ռուսաստանի, մյուս կողմից Հայաստան-Ադրեջանի միջև հնարավոր է որ ազդեն Ծրագրի իրականացման վրա:<br><br>Հավանականությունը = 2<br>1-5 սանդղակով | Ծրագիրը պետք է պահեստային պլան ունենա այս հնարավոր սցենարի դեպքում: | Ծրագրի իրականացման թիմ (ԾԻԹ): Ծրագրի Ղեկավարող Հանձնաժողով (ԾՂՀ) | ԾԻԹ | 2012 հոկտեմբեր | | |
| 2 | **Ներքին ռիսկեր** | Քաղաքական | Երկրում առկա քաղաքական վիճակը  հաշվի առնելով, պետք է ընդունել  ներքին քաղաքական անկայունության ռիսկը, որը հնարավոր է որ էապես ուշացնի Ծրագրի իրականացումը: Ավելին, կառավարության փոխվելու հետ մեկտեղ, հնարավոր է որ առաջնահերթությունները փոխվեն և վտանգեն Ծրագրի իրականացումը2<br><br>Հ = 2 | Ծրագրի ղեկավարությունը պետք է պատրաստ լինի միջոցառումների իրականացման ուշացմանը և նախապատրաստի երկընտրան-քային ժամանակացույց: Ցանկացած նախաձեռնություն պետք է համաձայնեցվի պետական առաջնահերթությունների հետ: Բոլոր շահառուները պետք է ներ-գրավված լինեն, ինչպես առաջար-կությունների ձևակերպման, այն-պես էլ իրականացման փուլերում: Դա կապահովի թափանցիկություն և ջանքերի կայունություն, եթե հիմնական վճիռ կայացնողները փոխվեն: | Ծրագրի իրականացման թիմ (ԾԻԹ): Ծրագրի Ղեկավարող Հանձնաժողով (ԾՂՀ) | ԾԻԹ | 2012 հոկտեմբեր | | |